

ՄԵՐ ՏԱՆ ՀԱՎԱՍԱՐ ԱՆԴԱՄԸ

«Յայֆիլմի» էկրանին հարյուր անգամ հույս ու հավատով սևեռվելուց և գրեթե նույնքան անգամ էլ կինոդահիլիճը անհարմարության ինչ-որ զգացումով թողնելուց հետո (հերթական ձախողումը կարծես քո անձնական ձախողումն է), մենք այսօր մեր կինոյի մասին եքե սրամտությամբ ենք խոսում, նշանակում է դեռ հույս ենք փայփայում, մեր «անառակ եղբօրից» դեռ ձեռ չենք քաշել ու երբեք էլ ձեռ չենք քաշելու, անհավատ ցինիզմը մեր դեմքին դեռ դիմակի կարծրություն չի առել և երբեք էլ չի առնելու: Չի առնելու, քանի որ կինոն այսօր, առավել՝ վաղը, ազգային-դասակարգային ծանր, լինել-չլինելու նրգակցության մեջ մեր մշակութային ճակատի այն ամենակարևոր հատվածն է, որի պարտությունը հավասարագոր կլիներ ամբողջ ճակատի պարտության և որտեղ արժեր կենտրոնացնել մեր ամենատաղանդավոր կազմակերպիչներին ու ամենատաղանդավոր արվեստագետներին: Սա չափազանցումն չէ. կինոն և առաջին հերթին միայն կինոն է ի վիճակի ասելու աշխարհին՝ ով ենք մենք, որտեղից ենք գալիս, ուր ենք գնում:

Բայց նախ պետք է գիտենալ, թե մենք ով ենք և ապա միայն ասել: Գիտե՞նք արդյոք մենք, թեկուզ կես-Տարկովսկու, կես-Բոնդարչուկի, կես-Միխալկովի, կես-ամենաանհայտ ոուս թեմադրողի չափ գիտի՝ արդյոք մեր թեմադրող-ռեժիսորների գերակշիռ մասը իր ժողովրդի պատմությունը, քանատեղծությունը, լեզուն, կարո՞ղ է արդյոք զուտ լեզվից ելնելով, զուտ հայերենի իմացությամբ ժողովրդի անցած ճանապարհի պատմություն գծել կամ նրա բարոյագրի կարագրի դիմագիծ քաշել, կարո՞ղ է, եթե կինոխցիկը նրա ձեռքից, ասենք թե, պատահաբար խլվի, այդ կինոթեմադրողը հայ գրող լինել. ոչ թե առհասարակ գրող՝ որ այսօր դժբախտաբար պիտի նույնպես ցանկալի լիներ, այլ հայ, ազգային գրող՝ իր մասին պատմել զորող արվեստագետ: Պատասխանը մեկ և հանրահայտ է: Եվ չիմացության-անզորության այս մեկ և նույն ամրոցից են սկսվում նույնանշանակ «կույր ուխտագնացությունն» էլ, նույնքան կույր «խաչակրաց արշավանքն» էլ դեպի հայ գրականություն ու իրականություն:

Թվում է, գոնե առաջին դեպքում, վատ ոչինչ չկա, թվում է, դա գոնե հավատարմություն է մայրենի գրականության տառին ու բառին, ուրեմն նաև ժողովրդի ոգուն: Իրականում, այնինչ, դրանք՝ այդ չիմացությանբ քամահրելը և չիմացությանբ հավատարմացրվելը, մեկ և նույն չափով կործանարար են հենց իր՝ կինոյի հա-

մար:

Եկրանով անցել են, սպորտից սկսած ու պետական-քաղաքական գործունեությամբ վերջացրած, բոլոր կարևոր մարզերի շատ թե քիչ նշանավոր գրեթե բոլոր գործերը, այստեղ ու այնտեղ հայերը դեռ շարունակում են նշանավորվել, մեր գրականության նախնիների հաջողություններին իր կարեցածի չափ մեր ժամանակը հաջողություններ է ավելացնում, և հայ կինոն էլ շարունակում է հետևել մեր իրականությանն ու գրականությանը - շարունակում է էկրանացնել եղած, ավարտված, կայացած, կայունացած վիճակներ ու դեմքեր, որոնք, ինչ խոսք, արժանի են հարգանքի ու մեծարման, բայց և որոնք ստեղծագործող արվեստագետին թույլ չեն տալիս ասելու իր խոսքը, պարտադրում են իրենց խոսքը՝ որ արդեն վաղաձանոր էր: Իսկ ամեն մի լուրջ արվեստ, ի թիվս որոնց և կինոարվեստը, և իրեն հարգող յուրաքանչյուր արվեստագետ այդպիսիք դառնում են իրականության նոր պրոբլեմների բացահայտմամբ, իրականության հում նյութից նոր արժեքներ ստեղծելով միայն, այլ ոչ թե եղած արժեքների վերարձարձնամբ, եղած արժեքները, իբր, նոր լեզվի փոխադրելով: Գրողներիս ի՞նչ անուն կտային իրենք կինոթեմադրողները, եթե մենք իրենց ֆիլմերը վերապատմեինք գրականության լեզվով:

Դուք նույն գրողներն եք, միայն թե գրում եք իրաշագործ կինոխցիկով: Ժամանակն է, ժամանակն է, սիրելի կրտսեր եղբայրներ՝ որ կրտսեր եք, բայց վաղուց արդեն փոքր չեք, ժամանակն է այս ժողովրդի մշակութային կյանքի ստեղծման և, այդպիսով, այս երկրի ապագայի առջև կանգնել հավասար եղբոր իրավունքով ու հավասար պատասխանատվությամբ: